Արձանագրություն N 4

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/131» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 21.10.2019թ., Ժամը՝ 11:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Մարտիրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Լ. Գևորգյան, Ե. Մատասյան, Ս. Գևորգյան, Բ. Տեր-Թովմասյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ի. Եղիազարյան

I. ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Մարտիրոսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 Համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության և <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

1.2 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցների կողմից ներկայացրած հայտարարությունները համարվել են իրականությանը համապատասխանող, բացառությամբ **«ԶԻ ԷՆԴ ԶԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ**-ն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիներին համախառն եկամուտ չունի, որը՝ համաձայն հրավերի 2.5 կետի 3-րդ ենթակետի չպետք է պակաս լինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից: Բացակայում է նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը, ինչպես նաև 3.2 հավելվածում նշված մասնագետի հաստատած գրավոր համաձայնությունը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին և մասնագետի որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

1.3 **«Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ**-ի ներկայացված որակավորման փաստաթղթերում նույնպես առկա է անհամապատասխանություն՝ բացակայում են նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի հանձման–ընդունման արձանագրությունները և կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցի տեխնիկական անձնագրի պատճենը:

1.4 **«ՆԱԳՇԻՆ» ՍՊԸ և «Քիմպաշտպանություն» ՍՊԸ կոնսորցիումի** ներկայացված որակավորման փաստաթղթերում անհամապատասխանությունը հետևյալն է՝ նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի հանձման–ընդունման արձանագրությունների գումարը չի համապատասխանում պայմանագրի գումարի հետ, տեխնիկական միջոցի ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող վարձակալության պայմանագրում նշված չէ պայմաանգրի ավարտի ժամկետը:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետով՝ նիստը

կասեցրեց՝ առաջարկելով վերոնշյալ մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

1.5 Համաձայն Կարգի 48-րդ կետի՝ մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին</u>

(Ա. Մարտիրոսյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց՝ հանձնաժողովի նիստը հրավիրել Մասնակցի կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունը ներկայացնելու կամ չներկայացնելու օրվա հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Մարտիրոսյան
Անդամներ՝		Լ. Գևորգյան
		Ե. Մատասյան
		Բ. Տեր-Թովմասյան
		Ս. Գևորգյան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան